

Թափոնների կառավարում ձեռքի հետքը (Handprint) կայուն զարգացմանն ուղղված գործողություններ



Ներածություն

Էկոլոգիական ոտնահետքը (footprint) և ձեռքի հետքը (handprint) երկու փոխընդհանուր հասկացություններ են, որոնք օգնում են ինձ և Ձեզ նման մարդկանց գտնել հասարակության և մոլորակի կայուն զարգացմանը նպաստող ավելի կայուն ապրելակերպ վարելու միջոցը: Էկոլոգիական հետքը երկրի ռեսուրսների վրա մարդու ազդեցության ցուցանիշն է: Յուրաքանչյուր մարդ թողնում է իր Էկոլոգիական հետքը: Հենց ապրելակերպն է որոշում, թե որքան փոքր կամ մեծ է նրա հետքը:

Handprint-ը մոլորակի սպառման և արտադրման միջև հավասարակշռությունը վերականգնելու համար անհատապես և համատեղ արվող գործողության ցուցանիշ է:

Դրական պատմությունները հզոր ազդեցություն ունեն գաղափարների ձևավորման և այլոց գործելակերպի խթանման հարցում: Դա շատ կարևոր է շրջակա միջավայրի համատեքստում, երբ մենք ցանկանում ենք, որ մարդիկ լիահույս լինեն և աշխատեն խնդրի լուծման ուղղությամբ:



Նպատակներ

Աշակերտները կկարողանան.

- ուսումնասիրել թափոնների խնդիրը լուսաբանող տարբեր տպագիր լրատվամիջոցներ,
- վերլուծել նորությունների լուսաբանումը,
- ուսումնասիրել դրական նորությունները,
- պլանավորել և իրականացրել Handprint-ի գործողություններ:

Էկո-Դպրոցներ ծրագրի քայլերը. կայունության աուդիտի իրականացում, գործողությունների ծրագրի ստեղծում, իրագրելում և ներգրավում, Էկո-Նորմի ստեղծում:
Ուսումնական պլանների փոխկապակցում. գիտություն, բնապահպանություն, հասարակակազմիտություն, համաշխարհային քաղաքացիություն:



Պահանջվող ժամանակ/ տևողություն

- **Դասարանային աշխատանք 1.** 60 րոպե ներածության և նախնական մանրամասների, ինչպես նաև խմբային աշխատանքի համար:
- **Տնային առաջադրանք 1.** 15 օր լրատվամիջոցների վերլուծության համար:
- **Դասարանային աշխատանք 2.** 1 տարվա Handprint-ի գործողությունների պլանավորման և պահպանման համար:

Անհրաժեշտ ռեսուրսներ

- «Քաղաքի զրոյական թափոններով կինը» թերթի լուսաբանում <https://mumbaimirror.indiatimes.com/mumbai/other/citys-zero-waste->
- գրենական պիտույքներ
- համացանց և այլ տպագիր լրատվամիջոցներ
- ռեսուրս 2. Handprint:

Գործողություններ

Դասարանային աշխատանք 1

- Աշակերտների հետ քննարկեք լուսաբանման երկու տեսակները դիտարկելու անհրաժեշտությունը՝ թափոնների բացասական ազդեցությունը լուսաբանման վերաբերյալ և թափոնների խնդրի լուծմանը միտված դրական գործողություններ առաջարկող նյութեր:
- Հարցրեք աշակերտներին, թե որն է դրական պատմությունների առավելությունը:
- Բացատրեք աշակերտներին, որ բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված այս դրական գործողությունը կոչվում է «handprint»:
- Աշակերտներին բաժանեք խմբերի (յուրաքանչյուրում 3-4 հոգի) և խնդրեք նրանց ուսումնասիրել թափոնների հետ կապված handprint-ի գործողությունները: Որպես օրինակ ներկայացրեք ռետուրս 1-ը՝ Քաղաքի զրոյական թափոններով կինը»:
- Տեղեկատվական թերթիկ 4-ին ծանոթանալուց հետո յուրաքանչյուր խմբին խնդրեք ներկայացնել իրենց տեսակետները:

Տնային առաջադրանք 1

- Աշակերտների խմբերին 15 օր տրամադրեք՝ ծանոթանալու տարբեր տպագիր լրատվականներում լուսաբանվող նյութերին: Աշակերտները կարող են դիտարկել թերթերի առցանց հրապարակումները, հեռուստատեսությունը, լրատվամիջոցների (և ոչ միայն) էջերը, որոնց ուղղվածությունը դրական պատմություններ են, օրինակ՝ the Better India-ն:
- Օգնեք աշակերտներին հավաքել համապատասխան հոդվածները և բերել դասարան:

Դասարանային աշխատանք 2

- Խնդրեք աշակերտների խմբերին ամփոփել իրենց հավաքած տարբեր նորությունները/պատմությունները: Յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտի հանձնարարեք ներկայացնել իրենց խմբի ուսումնասիրած handprint-ի տարբեր գործողությունները:
- Ընտրեք ներկայացուցչական լրատվական նյութեր, որոնք կարող են փակցվել Էկո-Դպրոցներ ծրագրի հայտարարությունների տախտակին՝ «Տեղեկատվության տրամադրում և ներգրավում» բաղադրիչի շրջանակներում:
- Խնդրեք աշակերտներին պլանավորել և դասարանում/դպրոցում իրականացնել վերամշակման հետ կապված handprint-ի ակցիա:
- Խնդրեք աշակերտներին ստեղծել Էկո նորմ, որը վերաբերում է թափոնների կառավարմանը՝ օգտագործելով handprint-ի մեթոդը:
- Աշակերտների կողմից մշակված Էկո նորմը պետք է փակցնել Էկո-Դպրոցներ ծրագրի տեղեկատվական տախտակին կամ այլ հարմար վայրերում:

Շարունակական ներգրավվածություն

Ուսուցիչները պետք է երաշխավորեն աշակերտների ներգրավվածությունը handprint-ի գործողություններին ողջ տարվա ընթացքում:

Գնահատում

Խնդրե՞ք աշակերտներին գնահատել իրենց handprint-ի գործողությունների հաջողությունը: Կարող եք մի քանի հարց տալ այն մասին, թե ինչպես կարող ենք սահմանել handprint-ի գործողությունների առաջնահերթությունները, ինչ մարտահրավերների կարող ենք հանդիպել, և որն է լինելու դրանք հաղթահարելու մեր ռազմավարությունը:

Ռեսուրս 1

City's zero-waste woman
 With very basic changes, Mumbai resident Meera Shah has created a zero-waste lifestyle for herself and her family

MEERA'S WASTE MANTRAS

- Use own utensils to pack left over food, or even collect takeaways.
- Donate clothes you don't need.
- Reusable menstrual cups are a better alternative to sanitary pads.
- There's no shame in collecting your own hair after a visit to the parlour. Put this hair in composting bin.
- Do not shop for things you don't need. Do not hesitate in using things friends and relatives have stopped using if you need those.
- Compost wet waste.
- Give away glass bottles and plastic items to raddiwallah, or to NGOs working for reusable energy.

(Վերևի նկար) Միրա Շահը Մուլունդայի իր տանը: (Ներքևի նկար) Նա կոմպոստացում է թափոնները և օգտագործում դրանք բույսեր աճեցնելու համար:

<https://mumbaimirror.indiatimes.com/mumbai/other/citys-zero-waste-woman/articleshow/61212063.cms>

Ռեսուրս 2

Handprint

- «Handprint» ծրագիրը ներկայացվել է Բնապահպանական կրթության կենտրոնի (CVE) կողմից 2007թ-ին ՅՆԴԿԱՍՏԱՆԻ Ահմադաբադ քաղաքում կայացած ՅՈՒՆԵՍԿՕ-ի բնապահպանական կրթության 4-րդ միջազգային հանձնաժողովում:
- Հայեցակարգը առաջացել է CEE-ի ծրագրերից մեկից՝ Բնապահպանական կրթություն Ասորիա Պրադեշի դպրոցներում (EESAP 2000-2008): Ծրագիրը, որն իրականացվել է 1500 դպրոցներում, փոքր գործողությունների նախագծերում ներգրավել է աշակերտներին, ինչպես նաև համայնքներին:
- Կրթության տասնամյակը հանուն կայուն զարգացման (DESE) 2005-2014 թվականներին նույնպես ճանաչեց Handprint-ը՝ որպես ESD գործողության միջոց. գործողություն, որն ուղղված է նվազեցնելու մարդկային հետքը և աշխարհն ավելի կայուն դարձնելուն: Handprint-ը ներկայացնում է այն համոզմունքը, որ բնապահպանական խնդիրները լուծելու համար մենք կարող ենք փոփոխություն կատարել անհատական և կոլեկտիվ գործողությունների միջոցով:

Կարդա՛ ավելին Handprint-ի մասին
<http://handprint.in/>

